

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (UGAB)
80ամեակին առիթով
ՀԲԸՄ-ի Նիսի վարչութեան նախագահ
Պրն. Յովհաննէս Չիլինկիրեանի
արտասանած բացման խօսքը

Յարգելի հիւրեր եւ սիրելի հայրենակիցներ,

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) Նիս-
Քոթ տ'Ազիւրի մասնաճիւղի վարչութեան անունով մեր
խորին շնորհակալութիւնները կը յայտնենք ձեր
ներկայութեան համար: Խորին շնորհակալութիւն Տիկ.
Սուլանժ Ռոտրիկի, որ քաղաքապետ-երեսփոխան ժազ
Մետրսէսի ներկայացուցիչն է եւ այս հանդիսութեան
պատուոյ նախագահուիին: Շնորհակալութիւն նաեւ
Տարօն վրդ. Ճերէճեանի որ ստանձնած է այսօրուան
հոգեւոր նախագահութիւնը: Շնորհակալութիւն մեր
սիրելի ընկերներուն, որոնք եկած են շատ հեռուներէն:

ՀԲԸՄ-ի հիմնադրութեան 80րդ տարեդարձը վերջերս մեծ
շուքով տօնուեցաւ Միացեալ Նահանգներու, Գանատայի,
Հարաւային Ամերիկայի, Լիբանանի եւ այլ հայաշատ
կեդրոններու մէջ, ինչպէս նաեւ Նոյեմբեր 1986ին՝ Փարիզ:
Բացառիկ հանդիսութիւններով յիշատակուեցաւ
Բարեգործականի 80ամեակը:

20 Նոյեմբեր 1986ին, մեծայարգ վարչապետ ժազ Շիրաք
Փարիզի քաղաքապետական պալատին մէջ ի պատիւ
ՀԲԸՄ-ի ճոխ ընդունելութիւն մը սարքեց, որուն
հրաւիրուած էին 400է աւելի հայեր: Սոյն հանդիսութեան
սահիկները պիտի ցուցադրուին քիչ ետք: Նոյն երեկոյթին
վարչապետ ժ. Շիրաք հիացումով խօսեցաւ հայ ազգին
արժանիքներու մասին եւ առ այդ իրեն շնորհակալութիւն
կը յայտնենք:

Ի՞նչ է Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, ինչո՞ւ հիմնուած է եւ ի՞նչ նպատակ կը հետապնդէ: 19-րդ դարու վերջերն էր: Արեւմտեան Հայաստանի դարերէ ի վեր հալածուող հայ ժողովուրդը այս անգամ սարսափի մատնուած էր: Կարմիր Սուլթան Ապտիւլ Համիտի հրամանով կազմուած զինեալ ուժերը կը յարձակէին հայ գիւղերու վրայ եւ հայ ժողովուրդը անխնայ կը ջարդէին: Խուճապի մատնուած հայ գիւղացին կը փախչէր ո՛ր որ կրնար, դէպի Պոլիս, դէպի Լիբանան, դէպի Եգիպտոս եւ մինչեւ հեռաւոր Ամերիկա...: Հայ գիւղերն ու գաւառները կը պարպուէին: Ի՞նչ կ'արժէ հայ գիւղը առանց հայ գիւղացիին եւ հայրենիք մը առանց հայութեան: Մեծ էր վտանգը: Ահա այս վտանգն էր Բարեգործականի հիմնադրութեան պատճառը:

1906ին Գահիրէի մէջ Մեծն Պօղոս Նուպար փաշա եւ իր ընկերները տեսան այս մեծ վտանգը: Ուզեցին արգելք ըլլալ Հայաստանի պարպումին եւ 15 Ապրիլ 1906ին, Զատիկի օր մը Գահիրէի մէջ հիմնեցին Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը հետեւեալ նպատակներով.-

- 1 - Օժանդակել հայ ժողովուրդին եւ իր հայրենիքին:
- 2 - Օգնել անոնց նիւթական եւ տնտեսական վիճակի բարելաւման:
- 3 - Քաջալերել ամէն նախաձեռնութիւն, գործ եւ հրատարակութիւն:
- 4 - Բարեգործականը մարդասիրական հաստատութիւն մըն է, որեւէ քաղաքական կամ առեւտրական հանգամանք չունի:

Պօղոս Նուպար փաշան եւ իր ընկերները իրապաշտ հայրենասէրներ էին, առանց երազային ցանկութիւններու, առանց դասակարգային նպատակներու: Այս մեծահարուստ բարերարները իրենց կեանքի փորձառութեամբ գիտէին թէ այս նիւթական աշխարհին մէջ ամէն բան դրամի եւ ուժի վրայ հիմնուած է եւ առանց դրամի ոչինչ կարելի է ընել: Այդ պատճառաւ ալ իրենց նիւթական ուժերը քով-քովի բերին եւ

3

հիմնադրամ մը ստեղծեցին: Իբրեւ առաջին գործ
որոշեցին հայ գիւղացիին նիւթապէս եւ բարոյապէս
օգնել՝ անոր դրամագլուխ յատկացնելով, հող մշակելու
գործիքներ տալով եւ սորվեցնելով զանոնք գործածելու
ծեւերը: Այս քայլով անոնք ուզեցին տնտեսապէս
զօրացնել հայ գիւղացին: Որովհետեւ եթէ հայ գիւղացին
հարստանար ի գին ամէն բանի պիտի պաշտպանէր իր
ունեցուածքը: Անոնք խորապէս համոզուած էին թէ
Արեւմտեան Հայաստանի փրկութիւնը հայ գիւղացին է
ի՛ր աւանդութիւններով, ի՛ր հաւատքով եւ ի՛ր
մշակոյթով:

1906էն մինչեւ 1915 ՀԲԸՄ-ը անհաւատալի վերելք մը
ունեցաւ եւ մեծ ժողովրդականութիւն շահեցաւ իր
բարեգործական աշխատութեամբ: Բայց 1915-ի եղեռնը,
թուրքերուն կողմէ հայ ազգի դէմ գործադրուած
ցեղասպանութիւնը ամէն բան խորտակեց:

Այդ դժուար տարիներուն ՀԲԸՄ-ը կրկին իր ժողովուրդին
հետ էր, վրաններուն տակ տառապող իր զաւակներուն
քովն էր, իր որբերուն կողքին էր...: Ան աշխատեցաւ
դարմանել գաղթական հայուն ցաւերը: Եղեռնի
պատճառով ցիր ու ցան եղած սփիւռքահայերուն
վերանորոգման աշխատանքներուն առաջնորդը եղաւ եւ
նոր հիմնուած հայրենիքի վերաշինութեան մասնակցեցաւ
առանց նկատի առնելու անոր քաղաքական կառույցը եւ
իբրեւ առաջին պարտականութիւն նկատեց
սփիւռքահայը հայ պահելու աշխատանքները՝
դպրոցներով, մշակութային կեդրոններով եւ
երիտասարդական միութիւններով:

Այսօր, իր հիմնադրութեան 80րդ տարեդարձին ՀԲԸՄ-ը
Միջին Արեւելքէն մինչեւ Եւրոպա, Աւստրալիայէն մինչեւ
Ամերիկա 20 երկիրներու մէջ գտնուող 115
մասնաճիւղերով եւ 20.000-է աւելի անդամներով, 22
վարժարաններով եւ 6.000-է աւելի աշակերտներով
Սփիւռքի տարածքին գտնուող ամենէն կարեւոր
հայկական կազմակերպութիւնն է:

1906-էն մինչեւ այսօր ՀԲԸՄ-ի նպատակները անփոփոխ կը մնան: Բարեգործականի բոլոր նախագահները եւ իրենց վարչութիւնները հաւատարիմ մնացին այս նպատակներուն, սկսելով առաջին նախագահ Մեծն Պօղոս Նուպար փաշայէն, մեծ առեւտրական հանճար Գալուստ Կիւլպէնկեանէն հասնելով մինչեւ այսօրուան ցլեանս նախագահ, մեծ բարերար Պրն. Ալեք Մանուկեանը: Անոնք հետեւեալ սկզբունքներով կ'աշխատէին.-

- Հաւատք մե՛ր անդամներուն, մե՛ր ժողովուրդին, մե՛ր հայրենիքին,
- Հաւատք մեր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Էջմիածնի եկեղեցւոյն,
- Հաւատք մեր աւանդութիւններուն,
- Հաւատք Սուրբ Մեսրոպ Մաշտոցի լեզուով հայ մշակոյթին:

Վերոնշեալ սկզբունքները անբաժանելի տարրերն են ՀԲԸՄ-ի:

Բայց ի՞նչ է հայը Սփիւռքի մէջ, ի՞նչ ենք մենք...: Երեւակայեցէք ծաղիկի փունջ մը՝ փրցուած իր արմատներէն եւ ծաղկամանի մը մէջ դրուած: Այդ փունջը պիտի դիմանայ առաւելագոյնը քանի մը շաբաթ: Թերեւս ծաղկամանի մէջ յատուկ դեղեր դնելով կարելի կ'ըլլայ երկարած գել անոր կեանքը.., բայց վախճանը անխուսափելի է: Այդ ծաղիկները պիտի թառամին եւ պիտի մեռնին անպայման: Իսկ եթէ այդ ծաղիկները մնան իրենց արմատներուն վրայ, անոնք իրենց հունտերը պիտի տան հողին եւ կրկին ու կրկին պիտի ծաղկին: Մենք հայերս, Սփիւռքի մէջ մեր արմատներէն փրցուած ծաղիկներ ենք: Եթէ հեռանանք մեր արմատներէն, եթէ մոռնանք մեր ժողովուրդը, մեր հայրենիքը, մեր Սուրբ Էջմիածինը եւ մեր մշակոյթը, այն ատեն պիտի ցամքինք ու պիտի մեռնինք ուշ կամ կանուխ:

Արեւմտեան Հայաստանի ջարդուած հայ ժողովուրդին բեկորներն հանդիսացող հայ Սփիւռքը, այսինքն՝ մենք,

դուք, անոնք եղող այս հրաշալի ծաղիկները պետք չէ մեռնին: ՀԲԸՄ-ի սկզբունքները՝ այս հրաշալի ծաղիկները հրենց արմատներուն միացնելու կարողութիւնը ունին: 5

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը Սփիւռքի բոլոր հայերուն ձեռք կ'երկարէ ըսելով՝ եղբայր ենք մենք, միութիւնը զօրութիւն է, պետք է մէկ կողմ ձգել դասակարգային քաղաքական կուսակցական պայքարը, որ մինչեւ հիմա մեզ ոչ մէկ տեղ տարաւ եւ ասկէ ետք ալ տեղ մը պիտի չտանի:

Մեր ուժերը միացնենք Բարեգործականի նպատակներուն շուրջ եւ այն ատեն պիտի տեսնենք թէ հրաշք մը պիտի պատահի, հայ ազգին դարերէ ի վեր սպասած փրկութեան հրաշքը:

Շնորհակալութիւն բոլորիդ:

ՄԵՐ - 25-1-1987

Հովհաննէս Չիլիկյան